ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«26» «Մարտի» 2024 թ. № 92-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 275-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի օգոստոսի 8-ի «Շրջակա միջավայրի նախարարության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 275-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 21-րդ կետում «(Ձև 1)» բառից հետո լրացնել «կամ արձակման թերթիկ չվճարվող – դիմումի (Ձև 2)» բառերով,

2) 22-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«22. Անձնական նպատակով, խիստ անհրաժեշտության դեպքում, աշխատանքային ժամերին Աշխատողը կարող է բացակայել աշխատավարձի պահպանմամբ միայն Գլխավոր քարտուղարի համաձայնությամբ՝ տարեկան մինչև 40 ժամ, իսկ անչափահաս երեխա(ներ) ունեցող ծնողները՝ մինչև 60 ժամ (կրճատ և ոչ լրիվ աշխատանքային ժամանակի պայմաններով աշխատող Աշխատողները՝ համամասնորեն):»,

3) 24-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«24. Սույն կանոնների 22-րդ կետով սահմանված ժամերը չեն կարող օգտագործվել իրար հաջորդող մի քանի աշխատանքային օր (8 ժամ) բացակայելու նպատակով, ինչպես նաև ամենամյա և չվճարվող արձակուրդին նախորդող և հաջորդող օրերին:»

4) 25-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«25. Արձակման թերթիկ-դիմումը, Word տարբերակով, Աշխատողը Համակարգի միջոցով՝ ներկայացնում է Նախարարին (միայն քաղաքական և հայեցողական պաշտոններ) կամ Գլխավոր քարտուղարին, պահպանելով գործավարության կարգը, առնվազն նախորդ աշխատանքային օրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առնվազն մեկ ժամ առաջ: Ծառայողական նպատակով բացակայելու դեպքում, Աշխատողը հիմնավորող փաստաթուղթը

(օր.՝ հրավեր, գրություն, դատական ծանուցագիր և/կամ այլ), պահպանելով գործավարության կարգը, Համակարգի միջոցով ներկայացնում է Գլխավոր քարտուղարին:»,

5) 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«27. Արձակման թերթիկ-դիմումի և արձակման թերթիկ չվճարվող-դիմումի հաշվառումը կատարվում է Բաժնի կողմից, ինչպես նաև յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավարի կողմից: »

6) լրացնել նոր կետերով.

«28.1) Անձնական նպատակով, խիստ անհրաժեշտության դեպքում, աշխատանքային ժամերին Աշխատողը 22-րդ կետում նշված ժամաքանակը սպառելու դեպքում, 25-րդ կետով սահմանված կարգով, կարող է ներկայացնել արձակման թերթիկ չվճարվող-դիմում: Բացակայող աշխատողի վարձատրությունն իրականացվում է աշխատած ժամանակին համապատասխան:»,

28.2) Արձակման թերթիկ-դիմումում և արձակման թերթիկ չվճարվող-դիմումում նշված ժամանակից ուշ գնալու և/ կամ շուտ վերադառնալու դեպքում ժամերը կհաշվարկվեն համապատասխանաբար:»,

7) 30-րդ կետի 1-ին ենթակետում «արձակման թերթիկ-դիմումի» բառերից հետո լրացնել «կամ արձակման թերթիկ չվճարվող -դիմումի» բառերով,

8) 40-րդ կետի 1-ին և 2-րդ պարբերություններից հանել «ստորագրված» բառը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 1-ից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

3/26/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«26» մարտի 2024թ.

ք. Երևան

Ձև N 2

Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար

(ստորաբաժանման անվանումը)

(անուն, ազգանուն)

ԱՐՁԱԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ ՉՎՃԱՐՎՈՂ – ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլատրել բացակայել աշխատանքից՝ առանց աշխատավարձի պահպանման՝

202 թ. ---------- ---------- ժամը "----------" մինչև ժամը "----------"

Պատճառը՝ ----------

Դիմող՝ _____
/անուն ազգանուն/